Թուրքերեն
Առարկայական ծրագիր
2011- 2012 ուստարի

Ծրագիրը նախատեսված է հանրակրթական ավագ և միջին դպրոցների ընտրությամբ երրորդ օտար լեզու սովորել ցանկացող աշակերտների համար: Թուրքերենը դիտվում է որպես լրացուցիչ կրթություն՝ անհատի կրթական պատվերով:

Նպատակը.

Ընտրությամբ երրորդ լեզուն, որպես անհատի կրթական պատվեր, դիտարկվում է, սովորողի կողմի իր հետագա մասնագիտության ընտրության գործում, ուղղություն ցույց տվող, մասնագիտության մեջ ավելի խորանալու նախադրյալ, անհրաժեշտ առավելություններ ու հմտություններ ձեռք բերելու նախահիմք:
Այն նաև միջոց է՝ թուրքալեզու հասարակության հետ հաղորդակցման, թուրքալեզու տեղեկատվական աղբյուրներից օգտվելու,, հասակակիցների հետ համատեղ ծրագրերի իրականացնելու համար:

Խնդիրները.

Թուրքերեն լեզվի ու պատմության համակարգված ուսումնասիրում, լեզվամտածողության զարգացում, թուրքերենի ակտիվ կիրառման՝ հաղորդակցման ու թարգմանչական հմտությանների զարգացում, այսօրվա Թուրքիայի՝ որպես հարևան պետության ճանաչում, թուրքական մշակույթի տարբեր կողմերի ուսումնասիրում, միջմշակութային կապերի հաստատում:

Ուսումնական միջավայրը, սովորողին անհրաժեշտ գործիքներ

Խմբի մեծությունը՝ 10-12 հոգի: Համապատասխան տպագիր ու թվային գրականությամբ ապահոված ուսումնական կաբինետ, համացանցին միացված համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ ու պրոյեկտոր, ձայնագրիչ ՏՀՏ այլ միջոցներ: Ուսուցման կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու համար, անհատական Netbook, Notbook – k-ի կիրառումը դիտարկվում է պարտադիր նախապայման:

Սովորողի ուսումնական գործունեության ձևերը

Անհատական և խմբային հետազոտական աշխատանքներ, ուսումնական ճամփորդություններ, ուսումնական փաթեթների ստեղծում և այդ աշխատանքներին օժանդակում(էլեկտրոնային և տպագիր գրականության), մասնագիտական

փորձառություններ, մասնակցություն համապատասխան ակումբային գործունեությանը, մեդիաօլիմպիադաների մասնակցություն, հանձնարարված նյութի ներկայացում: Սովորողները, ուսումնական պարապմունքների ժամանակ, յուրացնում են լեզվական գիտելիքներ, կարդում, լսում և դիտում են ուսուցչի կողմից ընտրված նյութերը, կատարում են համապատասխան աշխատանքներ՝ դասի ժամանակ ստացած լեզվական գիտելիքներն ու հմտությունները ամրապնդելու և գործնականում կիրառելու համար:

Գործնական պարապմունքներ.

Օտար լեզվի ուսուցանումը, առանց գործնական կիրառման ու պրակտիկայի, անարդյունավետ է: Գործնական աշխատանքը օժանդակում է սովորողներին ավելի խորությամբ հասկանալ ուսուցանվող լեզուն, իսկ գործնականում դրա կիրառումը օգնում է դառնալ այդ լեզի կրողն ու ձեռք բերել համապատասխան լեզվամտածողություն:
Գործնական պարապմունքները բաղկացած են երեք մասին՝ գրավոր, տեսալսողական, խոսքային:
Գրավոր հմտությունների զարգացման համար, առավել կարևոր են թարգմանությունները՝ ակտիվ ու պասիվ: Քերականության ուսուցանումը, համապատասխան հանձնարարությունների, վարժությունների կատարումը, նույնպես դիտարկվում է գրավոր հմտության զարգացում:
Տեսալսողական հմտության զարգացումը կարևոր միջոց է ցանկացած օտար լեզվի ուսուցման գործում: Տեսալսողական նյութերը նախօրոք բաժանվում են երեք խմբերի՝ սկսնակ, որոնք սովորեցնում են ճիշտ արտասանել այն կամ այն բառն ու հնչյունը, միջին՝ սովորցնում են ճիշտ արտասանել նախադասությունը, արտահայտություններ, ո՞ր արտահայտությունը ի՞նչ դեպքերում է կիրառելի:
Բարձր մակարդակի տեսալսողական նյութերը օգնում ես սովորողին ամրապնդել իր ձեռք բերած լեզվական գիտելիքները, օգնում են լեզվամտածողության զարգացմանը:
Խոսքային. Վերոնշյալ երկու հմտությունների վերջնանպատակն է զարգացնել սովորողների ճիշտ ու վարժ խոսելու կարողությունը: Այս հմտության զարգացման կարևոր է ընթերցանությունը, ընթերցածը վերարտադրելու կարողությունը, սեփական մտքերի շարադրումը, առանց կաշկանդվելու երկխոսության մեջ մտնելը:

Գործնական աշխատանքներ են համարվում՝

- Կրթահամալիրի կայքի թուրքերեն էջի սպասարկումը
- Հայերենից թուրքերեն և հակառակը ամենօրյա թարգմանությունները:
- Քերականության ուսումնասիրություն և համապատասխան վարժությունների ու հանձնարարությունների միջոցով քերականական գիտելիքների ու կանոնների ամրապնդում:
- Ուսուցչի կողմից նախապես ընտրված տեսալսողական նյութերի դիտում, սինխրոն թարգմանություն:
- Թուրքիայի պատմության, մշակույթի, ավանդույթ ների ու պատմության ուսումնասիրություն և համապատասխան ֆիլմերի պատրաստում:

- Համացանցի կիրառմամբ թյուքալեզու հասակակիցների հետ կապի հաստատում և լեզվի գործնական կիրառում:
- Մասնակցություն Թուրքիայի և թյուրքալեզու այլ երկրների կողմից կազմակերպվող միջազգային մրցույթներին:

Բովանդակություն

Առարկայական գիտելիքներ

Թուրքերենի զարգացման պատմությունից: Թյուրքական լեզվաընտանիք: Թյուրքական լեզվաընտանիքի ընդհանուր առանձնահատկությունները: Թուրքերենի այբուբենները. նախահիսլամական գրեր (օրհունյան գիր, ույգուրական գիր): Արաբատառ թուրքերեն (օսմաներեն): Օսմանական գրի և լեզվի առանձնահատկությունները, կիրառական նշանակությունը: Լեզվական հեղափոխություն: Աթաթուրք և Հակոբ Դիլաչար (Մարթայան): Լատինատառ թուրքերեն:
Թուրքերենի դասընթացի բաղկացուցիչ մասերը՝ հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն:

Հնչյունաբանություն (Ses Bilgisi): Թուրքերենի հնչյունական համակարգը: Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ:
Ձայնավորների դասակարգումը: Ձայնավորների ներդաշնակության օրենքը (Ünlü Uyumu):Ներդաշնակության մեծ և փոքր կանոնները: Ձայնավորների հետ կապված հնչյունական երևույթները. ձայնավորի սղում, ձայնավորի ավելացում, ձայնավորի փոփոխություն:
Բաղաձայնների դասակարգումը: Բաղաձայնների ներդաշնակության օրենքը (Ünsüz Uyumu): Բաղաձայնի խլացում, բաղաձայնի ձայնեղացում: Բաղաձայնների հետ կապված հնչյունական երևույթները. բաղաձայնի սղում, բաղաձայնի ավելացում, բաղաձայնի փոփոխություն:
Ձուլող հնչյուններ (Kaynaştirma Harfleri): Շեշտ (Vurgu):

Բառագիտություն (Sözcük Bilgisi): Բառիմաստ. բուն իմաստ, փոխաբերական իմաստ, կոնկրետ իմաստ, վերացական իմաստ, այլաբանական իմաստ, տերմին:
Բառերի իմաստային հարաբերությունները. հոմանիշ (Anlamdaş), համանուն (Sesteş), հականիշ (Karşit): Բնաձայնություններ (Yansima): Կրկնավորում (İkileme):
Բառերի տեսակներն ըստ կազմության. պարզ բառեր, ածանցավոր բառեր, բարդ և բաղադրյալ բառեր:
Թուրքերենի վերջածանցները (Ekler): Բառակազմական ածանցներ (Yapim Ekleri):
Բառակազմական ածանցների տեսակները՝ գոյականից գոյական ստեղծող, գոյականից բայ ստեղծող, բայից գոյական ստեղծող, բայից բայ ստեղծող: Խոնարհման, հոլովման, ժամանակային և դիմային վերջածանցեր (Çekim Ekleri):

Ձևաբանություն (Biçim Bilgisi): Խոսքի մասեր, դասակարգումը (Sözcük Türleri, siniflandirilmasi):
Գոյականներ (İsimler/ Adlar): Գոյականի առանձնահատկությունները: Հատուկ և հասարակ գոյականներ: Կոնկրետ և վերացական գոյականներ: Հավաքական գոյականներ: Գոյականի թիվը:
Գոյականի կապակցման ձևերը (İsim Tamlamalari). որոշյալ կապակցություն (Belirtili Ad Tamlamasi), անորոշ կապակցություն (Belirtisiz Ad Tamlamasi), անվերջածանց կապակցություն (Takisiz Ad Tamlamasi), շղթայական կապակցություն (Zincirleme Ad Tamlamasi): Գոյականի հոլովները (İsmin Hâlleri):
Դերանուններ (Zamirler/ Adillar): Դերանունների տեսակները, դասակարգումը . անձնական դերանուններ, անդրադարձ դերանուն, փոխադարձ դերանուն, ստացական դերանուններ, ցուցական դերանուններ, հարցական դերանուններ, անորոշ դերանուններ, վերաբերական դերանուն: Պարզ և բարդ դերանուններ: Դերանունների հոլովումը:
Ածականներ (Sifatlar/ Önadlar): Ածականի տեսակները, դասակարգումը: Որակական ածականներ (Niteleme Sifatlari): Հարաբերական ածականներ (Belirtme Sifatlari) . ցուցական ածականներ, թվական ածականներ (քանակական թվական, դասական թվական, բաշխական թվական, կոտորակային թվական), անորոշ ածականներ, հարցական ածականներ: Ածականի համեմատության աստիճանները (Sifatlarin Derecelendirmesi): Ածականների կառուցվածքը (Sifatlarin Yapisi): Ածականների կիրառությունը:
Մակբայներ (Zarflar / Belirteçler): Մակբայների տեսակները . ձևի մակբայներ, ժամանակի մակբայներ, տեղի մակբայներ, չափ ու քանակի մակբայներ, հարցական մակբայներ: Մակբայների կառուցվածքը (Zarflarin Yapisi):
Բայեր (Fiiller / Eylemler): Բայի ժամանակները և եղանակները (Fiil Kipleri): Բայի պարզ ժամանակաձևերը (Basit Zamanlar). Սահմանական եղանակ (Haber Kipleri). ներկա ժամանակ, անցյալ կատարյալ ժամանակ, վաղակատար ներկա ժամանակ (սուբյեկտիվ անցյալ), ապառնի ժամանակ, ընդարձակ ժամանակաձև: Ըղձական եղանակաձևեր (Dilek Kipleri). հարկադրական եղանակ, պայմանական – ըղձական եղանակ, ըղձական եղանակ, հրամայական եղանակ:
Թերի օժանդակ բայ (Ek - Fiil). թերի օժանդակ բայի ժամանակները:
Բայի բաղադրյալ ժամանակները (Birleşik Zamanlar). պատմողական բարդ ժամանակաձևեր (Hikâye Birleşik Zamanlar), սուբյեկտիվ բարդ ժամանակաձևեր (Rivâyet Birleşik Zamanlar), պայմանական բարդ ժամանակաձևեր (Şart Birleşik Zamanlar):
“Լինել” (Olmak) բայով կազմվող բարդ ժամանակներ:
Բայի սեռը (Fiil Çatisi): Բայի սեռն ըստ գործողության սուբյեկտի . ակտիվ բայեր (Etken Fiiller), պասիվ բայեր (Edilgen Fiiller), անդրադարձ բայեր (Dönüşlü Fiiller), փոխադարձ բայեր (İşteş Fiiller): Բայի սեռն ըստ գործողության օբյեկտի. անցողական բայեր (Geçişli Fiiller), անանցողական բայեր (Geçişsiz Fiiller), պատճառական բայեր՝

անանցողականներից կազմվող (Oldurgan Fiiller), անցողականներից կազմվող (Ettirgen Fiiller):
Բայ և բայանմաններ: Անորոշ բայաձևեր (Fiilimsiler/Eylemsiler). անորոշ դերբայ (İsim - Fiil), դերբայ (Sifat - Fiil), մակբայական դերբայ (Zarf- Fiil):
Բայի կառուցվածքը (Eylem Yapisi). Պարզ բայեր, ածանցավոր բայեր, բաղադրյալ բայեր (օժանդակ բայով կազմվող բաղադրյալ բայեր, կանոնավոր բաղադրյալ բայեր, բայական հարադրություններ/բարդ բայեր):
Հետադրություններ (Edatlar/İlgeçler): Առանձնահատկությունները, կիրառությունը:
Շաղկապներ (Bağlaçlar): Առանձնահատկությունները, կիրառությունը:
Ձայնարկություններ (Ünlemler): Առանձնահատկությունները, կիրառությունը:

Շարահյուսություն (Düzen Bilgisi): Նախադասություն: Նախադասության անդամները (Cümle Öğeleri). հիմնական (ենթական, ստորոգյալ) և երկրորդական (խնդիր, լրացում) անդամներ:
Նախադասության տեսակները (Cümle Çeşitleri). ըստ ստորոգյալի բնույթի՝ բայական ստորոգյալով և անվանական ստորոգյալով նախադասություններ; ըստ ստորոգյալի դիրքի՝ կանոնավոր և շրջված նախադասություններ; ըստ իմաստի՝ հաստատական, ժխտական, հարցական, բացականչական, պայմանական, հրամայական, ըղձական նախադասություններ; ըստ կառուցվածքի՝ պարզ, բարդ, համադասական, շաղկապավոր նախադասություններ:
Ուղղակի և անուղղակի խոսք (Dolaysiz ve Dolayli Anlatim):
Կետադրական նշաններ, դրանց կիրառությունը (İmla):

Սովորողի ստուգման և գնահատման կարգ

Գնահատումն իրականացվում է կրեդիտային համակարգի կիրառման արդյունքում, սովորողի կուտակած միավորների թվային գումարի միջինի հիման վրա:
Ենթադրյալ 10 կրեդիտի առկայության պարագայում, սովորողները կրեդիտներ ձեռք են բերում հետևյալ սկզբունքով՝
Ա.Կիսամյակային լիարժեք հաճախելիություն՝ 1 կրեդիտ
Բ. Մասնակցություն մեդիաօլիմպիադաներին՝ խրախուսական մրցանակ՝ 1 կրեդիտ, գլխավոր մրցանակ՝ 2 կրեդիտ:
Գ. Մասնակցություն ուսումնահասարակական նախագծերին՝ 1 կրեդիտ
Դ. Բանավոր և գրավոր պատասխաններ, ուսումնական նյութերի և փաթեթների ստեղծում և ներկայացում՝ 3 կրեդիտ:
Ե. Ուսումնահետազոտական աշխատանքներ՝ 2 կրեդիտ:
Զ. Մասնակցություն ուսումնահայրենագիտական ճամփորդություններին՝ 1 կրեդիտ:

Գրականություն

1. Ю. В. Щека, “Интенсивный курс турецкого языка”, учебник, МГУ 1996

2. А. Н. Кононов, «Грамматика современного турецкого литературного языка” Москва- Ленинград, 1956
3. С. Ольга, «Грамматика турецкого языка в таблицах (для начинающих)» Минск, 2006
4. Бенгису Рона, “Турецкий за три месяца”, Москва, 2007
5. Mehmet Hengirmen, “Türkçe Öğreniyoruz”, 6 Cilt (“Սովորում ենք թուրքերեն” – 6 հատոր), Ankara, 1995
6. Hakan Yilmaz, “Türkçe Okuyorum”, 2 Cilt (“Կարդում եմ թուրքերեն” – 2 հատոր), Dilmer Yayinlari
7. Ա.Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմագյոզյան “Թուրքերենի դասագիրք” Երևան ԵՊՀ, 2004
8. Հոդվածներ և աշխատանքներ (թուրք հեղինակների) թուրքերենի քերականական հարցերի վերաբերյալ
9. Թուրքալեզու գրականություն (թուրք և համաշխարհային գեղարվեստական գրականությունից)
10. Թուրքերեն ուսումնական կայքեր

Արտակ Զարգարյան
a. zargaryan@mskh.am